

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ներկայ 1898 թվականի
Պոլիարիոյ համար տարեկան 12 ֆրանկ
» » վեցամսեայ 6 »
Արտասահմանի » տարեկան 14 »
» » վեցամսեայ 7 »
ԿԱՆՆԻԿ ՎՃԱՐԵԼԻ

Համակ դրամ եղայն ղրկել հետեւեալ հասցեով
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒՄԻՈՒՆԵՔՆԵՐԸ ԼՐԱԳՐՈՑ ՎԱՌՆԱ (ՊՈՒԼԿԱՐԻԱ)

Редакция на ВѢСТНИКЪ
„Ирaвункъ“
ВАРНА (България).

Rédaction du journal
„Iravounk“
VARNA (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք
եւ չեն ղրկուիր եւ յարմար դասուած-
ները միայն կը հրատարակուին անբող-
ջովի կամ ռասսուր:
Ծանուցման տղը 20 սանթիմ. երե-
ֆեկ անկի անգամներու համար 20 0/0
գեղջ կը լինի:

ԶԳԱՑՈՒՄ ԵՒ ԽԵԼՔ

Ոչ ոք կրնայ հերքել թէ զգա-
ցումը մարդուն մէջ յաճախ այն
սրբազան կրակն է որ իւրաքանչիւր
անհատի երակներուն մէջ ոգեւո-
րութեան, սրտոտ գործունէութեան
կենդանարար հիւթը կը տարածէ:
Առանց անոր, սիրտը լոկ հում մը-
սի մը կաոր է, չոր ու կռքած, որ
չի բարախեր բնաւ և մարդուն մէջ
իսպառ մարած կը մնայ այն բա-
ցավառ յանդգնութիւնը որուն ա-
ւելի կամ նուազ մրցանակները կը
դառնան երբեմն, ինչպէս կըսէ
Հիւկո, ամենէն վիճ յաղթութիւն-
ները:

Եռանդուն զգացումն է նոյնպէս,
որ մարդուն մոռնալ կուտայ շատ
անգամ ամեն հաշիւ, ամեն խոր-
հուրդ, կը լեցնէ աւելնով ու խան-
դով, կը մղէ, կը տանի զանի ուր
որ ըլլայ, երբեմն դէպի բարձրե-
րը, երբեմն ալ դէպի մութ ու ա-
նորոշ ապագայի մը ահաւիտի ան-
դունդը:

Անոնք որ իրենց զգացումներուն
միայն անձնատուր եղած են, ալ-
եւս ոչ տրամաբանել կը գիտնան,
ոչ ալ հանդարտիլ: Դիպուածի և
բաղդի վրայ կը հիմնեն իրենց
գործը, կարչաւն միշտ խել-խօյ
վաղքով, առանց կասելու, առանց
ընկելու: Ու մէկ ալ նայիս, ուժա-
թափ, կլթոտ ծուկերով գետին կը
փռուին, իրենց հետ գետին փռե-
լով ու փշրելով նաեւ շատ մը վար-
դագոյն յոյսեր:

Կրծող որդ մըն է ան, զգացու-
մը, որ հանդարտ չի թողուր ան-
հատը, կամ ժողովուրդը, վայր-
կենական տպաւորութեան մը տակ
մէկէն իմէկ թունդ կը հանէ մար-
դուն ջիղերը, և կը թելադրէ զա-
նի վաղել ստեպ հրապուրիչ երե-
ւոյթի մը, շլացուցիչ հեռապատ-
կերի մը ետեւէն: Ու եթէ խելքը
չի գայ դիւրաբար դգացումնե-
րը քիչ շատ սանձահարել, եթէ չի
չափափէ ան պատահականութիւն-
ները, գործի մը ետքն ու առաջ-
քը, անատեն փուլումները կը
բարդուին, կորուստները անհա-
ւատալի կերպով կը բազմանան,

ու ամեն ինչ, գէշ կամ աղէկ,
դիպուածական կը համարուի լոկ:
Խելքն է, մտածումն է որ կըստի-
պէ մարդը պաղարիւնով ընկել իր
կացութիւնը, պատրաստ գտնուիլ
ամեն հաւանականութեան առջեւ,
և որ և է զոհողութիւն ընել՝ պա-
րագաներու յարմարած ատենին:

Զգացումը մարդը կը գրգռէ մի-
այն՝ մեռնի՛ր արդարութեան և ա-
զատութեան համար:

Բայց ինչքը կը հրահանգէ ապ-
րի՛լ որքան կարելի է և ուժով կըռ-
ուիլ անարդարութեան դէմ, բռն-
նութեան դէմ, առանց թուլանալու,
առանց վատանալու:

Անպատակ մահը միայն զգա-
ցումի գործ է, որ ոչինչ օգուտ
կարտագրէ: Խելացի կուին է փըր-
կութեան ճամբան, և անոր մէջ
մեռնելն է դիւցազնակուն մահը:

Տեղն է որ յիշեցնեմ հոս յայտ-
նի ընկերվարական Միլլէի մէկ
խօսքը որ կըսէ. «Երբ որ ինծի
ըսեն թէ կան մարդիկ որոնք
պատրաստ են մեռնիլ ընկերու-
թեան համար, ես կը խոնարհիմ
անոնց առջեւ» որոնք քաջութիւն
ունին, ուժ ունին ապրելու, ընկե-
րական կուրը շարունակելու եւ
պարագային համեմատ միայն զոհ-
ուելու»:

Զգացումի մարդն է որ ան-
խորհուրդ կը նետուի առաջ. այս
պահուս կը խնդայ աչք շլացնող
յաջողութեան մը հանդէպ եւ, յա-
ջորդ վայրկեանին՝ դառնապէս
կուլայ աննշան կորուստի մը վրայ:
Այսօր յափշտակուած է. վաղը
գուցէ սմբած բոլորովին:

Խելքի մարդը սակայն ոչ ժա-
մանակաւոր յաջողութենէն կը խաբ-
ուի, ոչ ալ ծանրակշիռ պարագա-
ներու մէջ իր կորովը կը կորսնցնէ:
Վասն զի բան մը ընելէն առաջ
խորհած է, համոզուած է եւ գի-
տակցութիւնն է իր առաջնորդը:
Չի վհատիր, եթէ նոյն իսկ սխա-
լած ըլլայ: Ա՛յ խառն դարմանել:
Իրեն համար նշանակութիւն ան-
գամ չեն ունենար դժուարութիւն-
ները եւ մինչեւ իսկ իրեն դէմ
փոքրոգութիւնները՝ որոնք մարդ-
կային սիրտը կը լեցնեն ատելու-
թեամբ եւ մախանքով:

Զգացումի մարդը անհամբեր է,

անզուսպ է: Խելքի մարդը կամաց
կը գործէ բայց վստահ, ապահով
կընթանայ դէպի առաջ, դէպի իր
նպատակը:

Ստիպուած ենք օրինակ բերել
Անգղիան: Մեծ է այն ճամբան
որմէն այդ աղբը ընթացած է մա-
նաւանդ վերջին 60—70 տարինե-
րուն մէջ, քալլ տա քալլ, շարու-
նակ եւ գիտակցութեամբ, հակա-
ռակ Ֆրանսայի՝ ուր շատ բան
զգացումով, ուսումով եղած է,
ուր ազդեցութիւններ եւ հակազ-
դեցութիւններ իրարու կը յաջոր-
դեն եւ ուր վճռէ՛ն, ժան ժագ
Ռուսոյի նման փիլիսոփաներուն եր-
նչումով կատարուած Մեծ Բե-
ղափոխութեան կը յաջորդէ նախ-
նորի միահիման կայսրութիւնը:

Անգլի, Անգղիա կընթանայ խել-
քով, յամր, բայց երբ քալլ մը
կաննէ դէպի առաջ, ալ եւս ետ
չի դառնար բնաւ:

Եթէ աւելի առաջ մղենք հա-
մեմատութիւնը այս երկու մեծ
ազգերու միջեւ, որոնք միայն նեղ
Մանչուկ զատուած են իրարմէ, կը
տեսնենք որ միապետական Անգ-
ղիա շատ աւելի ազատ ու գիտա-
կից է, բան հանրապետական Ֆը-
րանսան: Անգղիոյ մէջ ժողովուր-
դըն է որ կը վարէ երկիրը, բըն-
նելով ամեն խնդիր եւ հասցընե-
լով իր ձայնը մինչեւ հոն ուր կը
գտնուին իր գործակատարները,
երեսփոխան ու նախարար: Ֆրան-
սայի մէջ ժողովուրդը ընդհանրա-
պէս շատ չի հետաքրքրուիլ ընդ-
հանուր խնդիրներով, որոնց կար-
գադրութիւնը կառավարութեան
կիշնայ: Խումբ մը ընտրուածներ
կը խորհին ու կը գործեն իրեն
համար, փոյթ չէ թէ արդիւնքը
իր ուզածին պէս չըլլայ յաճախ:
1837էն ի վեր դանիալ Անգղի-
ան ոչ միայն թիզ մը հող չի կոր-
սնցուց, այլ և աւելցան նոր եր-
կիրներ 150 միլիոն բնակիչով ու
այդ ափ մը կղզին այսօր կը կա-
ռավարէ 400 միլիոն անձեր, աշ-
խահի ամենէն ընդարձակ պիտու-
թեան մէջ՝ ուր արեւը երբեք մարը
չի մտնիր:

«Թագուհին կը թագաւորէ բայց
չի կառավարել» կըսեն Անգղիո-
յիք: Կատարեալ սահմանադրական

վեհապետ մըն է, այսինքն իգործ
դնել կուտայ ինչ որ ժողովուրդը
կը պահանջէ և ոչ երբեք ցոյց կու-
տայ իր նախասիրութիւնը վիկ
(ազատական) կամ Թորի (պահ-
պանողական) կուսակցութեան նը-
կատմամբ: Կառավարութիւնը կը
յանձնէ փոխն ի փոխը այն կու-
սակցութեան զոր երկիրը կը նշա-
նակէ իր քուէովը:

Անգղիան, իրաւ է որ, Ֆրան-
սացիին գոռուած գոչիւնը չունի,
չի յափշտակուիր շուտ, չի յուզ-
ուիր ալ: Բայց իր դաստարանները
չեն զբաղիր ընդհանուր պոզանք
ազդող անանկ դատերով որոնք
Ֆրանսայի մէջ սրտերը կը խառ-
նեն, ինչպէս օրինակ բանաժողով,
երկաթուղիները եւն:

Այս ահագին տարբերութեան
պատճառը ուրիշ բան չէ կը կար-
ծեմ բայց եթէ երկու ժողովուրդ-
ներու նկարագիրներուն տարբե-
րութիւնը: Անգղիան քիչ կը խօ-
սի, լաւ կը դատէ, կը խորհի և
խելքով կը գործէ:

Ֆրանսացիք անանկ չեն. կը
յուզուին, կը պոռան, իրենց զգա-
ցումներուն միայն կանսան ու մա-
նաւանդ շատ խօսիլ գիտեն աւելի՝
բան գիտացութեամբ գործել:

Մեր ժողովուրդին ալ զգացում-
ները վառուած են, պէտք եղա-
ծին չափ եռանդ ալ ունի: Խելքը
միայն մոռնալու չէ: Հայ ժողո-
վուրդը արիւնոտ տարիներու ըն-
թացքին մէջ ցոյց տուաւ թէ ու-
նի սիրտ, ունի զգացում, ունի
անձնութիւն, յատկութիւններ
որոնք սակայն մեռնելու դատա-
պարտուած են, եթէ ժողովուրդի
ճակատագրին վարիչները իրենց
միակ առաջնորդ չընտրեն խելքը,
գիտակցութիւնը:

ՎԵՐՋԻՆ ԽՕՍԲ

Իրաւունքի նախընթաց համա-
րին մէջ ինծի դէմ գրուած պա-
տասխանագրի մը կարեւոր կէտե-
րը հրատարակուած էին:

Նախ ըսեմ որ Հնչակեան կու-
սակցութեան վերաբերութեամբ իմ
յայտնած բոլոր կարծիքներս հա-
մաձայն էին այն պաշտօնական

յայտարարութեանց, զորս Մարտ
յանուն իր բոլոր մասնաճիւղերուն,
իւրը աշխարհի հրատարակեց :

Սո՛ւտ են այդ յայտարարութիւն-
ները, — թող հերքելու քաջութիւնն
ունենան :

Եւ հերքումը կարելի է սպասել
միմիայն Դրօշակէն, Դաշնակցու-
թեան պաշտօնական օրականէն, ու
բուն խմբագրութեան ուղղութեամբ են
միութեան հրաւերները :

Ուրիշ ոչ ոք իրաւունք ունի օ-
գտնել, ըստ հաճոյս պոռպու-
լու : Աւելորդ էր իմ կողմէս վո-
խագործ պատասխան մը տալ Ի-
րաւունքի նամակագիր պարոնին,
քանի որ իր խօսքերը լոկ անհա-
տական հանգամանք ունին, և,
վաղը, եթէ սուտ կամ ծիծաղելի
գուրս գան, իր շատ մը ընկերնե-
րը՝ ինչպէս յաճախ պատահած է,
սա կտորուկ ու միաժամանակ բա-
նաւոր պատասխանը պիտի նետեն
երեսին :

«Դա իր անձնական համոզումն
է» : Ասով մէկտեղ, իբրեւ Վիրիլ
խօսք, օգտակար կը համարիմ քա-
նի մը դիտողութիւններս նշանա-
կել :

«Սըվաղըն, ճանկիրահան, եկաւ,
գնաց, մարդ պիտի դրկէր, չի շըր-
կեց» : Այս հէքեաթը շատ լսեցինք :

Այդ անձերը, ինչպէս Պ. Նա-
մակագիրն ալ կը խոստովանի, չի-
ւորք պատգամաւորներ չէին : Եւ
պարզ է թէ սա կամ նա մարդոց
անձնական տեսակցութիւնը, բա-
նակցութիւնը, զրաժը չի կրնար
երբէք վճռական նշանակութիւն
մը ունենալ, քանի որ Հնչակեան
կուսակցութեան ներկայացուցիչը
միմիայն կեդրոնն է :

Նամակագիր Պարոնը սխալ մը
կը գործէ ուրեմն, երբ տակաւին,
միամտօրէն, անպաշտօն անձերու
անուններ առաջ կը քշէ :

Ես կը յիշեցնեմ որ Սըվաղըն

ՍԱՐԿԱՒԱԳ

(7)

Եղբււր նա բաղկանեան լեռների այս
եւ այն կողմում գտնուած բուլղարա-
կան քաղաքներում, գտաւ իւր հին
ծանօթներին, ընկերներին եւ բարե-
կամներին շատերին, ուրոտը յարա-
բերութիւններ հաստատեց շատերի հետ
եւ ամեն տեղ քարոզելով քաղաքա-
կան ազատութեան գաղափարը, զար-
թեցրեց թմրած հայրենասիրութեան
զգացմունքները : Անասելի եռանդով
յորդորում էր նա մարտնչել հայրենիքի
թշնամու դէմ : Բացատրում էր թէ
այդ նպատակի համար ինչքան օգտա-
կար է մօտենալ եւ միանալ ժողովրդի
հասարակ, գիւղական դասի հետ : հա-
մողիկ պերճախօսութեամբ ապացույս-
նում էր միաբանութեան եւ հաստատ
կազմակերպութեան անհրաժեշտութիւ-
նը ընկճուած ժողովրդի համար : ցոյց
էր տալիս ապստամբութեան միջոցնե-
րը, ձեւերը, ճանապարհները եւայլն
եւայլն : Նորա եռանդոտ քարոզները
ուշադրութեամբ լսուում եւ ըստ մեծի
մասին համակրութեամբ ընդունում է-
ին, բայց հէնց որ Լեւոնին անսակա-
նից անցնում էր գործնականին եւ ա-
ռաջարկում էր իւր լսողներին ցոյց
տալ իրենց համակրութիւնը ո՛չ թէ
լոկ խօսքերով ալ գործով, առաջար-

վերադարձէն յետոյ, 1896 նոյնիւ-
28ին, ինչպէս նաեւ 1897 մայիս
6ին, Նորակազմ կեդրոնը՝ պաշտօ-
նական նամակներով միութիւն ա-
ռաջարկեց և հարցուց թէ Դաշ-
նակցութիւնը ի՞նչ պայմաններով
ու եղանակներով կը յուսայ իզը-
լուխ հանել այս բաղձալի գործը :
Դաշնակցութիւնը՝ պարտաւոր
էր ուղղակի և պաշտօնապէս պա-
տասխանել կուսակցութեան :

Ինչո՞ւ չըրաւ :

Ճիշդ տարի ու կէս կըլլայ որ
Դրօշակ ձայն ձուն չի հաներ կամ
«վգոյշ կը մնայ» : Բայց անդին
ամեն դաշնակցական գլուխէ մէկ
մէկ ձայն դուրս կուգայ : ո՞ր մէ-
կուն ըսածը ճիշդ է, ո՞ր մէկ տա-
րածախութեան համար կարելի է
ըսել թէ Դաշնակցական կուսակ-
ցութեան համոզումը կամ պահան-
ջումն է :

Դաշնակցականներ՝ զուտ անհա-
տական հանգամանքով, շատ բան
կըսեն, ո՛չ մասնիչ կը թողուն,
ոչ ալ դաւաճանը : Բայց գուցէ
նոյնը չի համարձակի ըսել Դր-
օշակ : ու թերեւս, օր մըն ալ
ծանուցանէ, թէ «գրանք մասնա-
ւորների համոզմունքն են» : Ա՛լ
ինչ գիտնամ :

Իրերու այս վիճակին մէջ ան-
հատական ու է վիճարկութիւն
աննպատակ կերեւայ : Եթէ դաշ-
նակցութիւնը ո՞ր և է ըսելիք ու-
նի, թող զրէ Դրօշակի մէջ : Ե-
թէ չունի, իր հետեւորդներուն կը
մնայ միմիայն լուի և պարապ տեղ
այս կամ այն տեսնելը չի մրո-
տել (*) :

ՎԱՅԱՆ ՇԱՅՐԻՄԱՆ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Մարտի 29 Մայիս

Այն գաղթականներուն մէջ որ ըն-
դունեցին նորիկ հիւրեր, հիներն՝ իբ-
րեւ առանձնաշնորհալ, մատակարա-
րող, չինող, ձեռնհաս յամենայնի եւն :

(*) Այս վիճարկութիւնը ալ փակ-
ուած կը նկատուի :

Կուս էր ներթափալ օգնել ապստա-
մութեան գործին, իսկոյն երկիւղը տի-
րապետում էր ամենքին, սկսում էին
կամաց կամաց յետ քաշուել :

Վերադարձալով Բուլղարիստ, Լեւոնին
մանրամասնօրէն հաղորդեց իւր քարո-
զութեան արդիւնքներին մասին հայրե-
նասէրների այն փոքրիկ խմբին, որը
այդ ժամանակ հաւաքուել էր Լիւբե-
կարալիւովի շուրջը : Թէեւ այդ ար-
դիւնքները շատ չնչին էին՝ այսու ա-
մենայնի խումբը եւ ինքը Լեւոնին
եկան այն եղբակացութեան, որ Բուլ-
ղարիայի ապստամբութեան գործը այն-
քան էլ յուսահատական վիճակի մէջ
չէ, ինչքան որ թուում է առաջին ան-
գամից, եւ ներկայ դէպքում անաշո-
ղութեան զլխաւոր պատճառը պէտք է
համարել այն, որ քարոզիչը իւր ճա-
ներով զիմել է գլխաւորապէս քաղա-
քացիներին, այն էլ ըստ մեծի մասին
նիւթապէս ապահովութեան ներքին,
որոնք անհամեմատ աւելի քիչ են տառապում
կառավարութեան կողմից՝ քան թէ
ուրեմեւ որ աղքատ դասը : Այլի առաջ
ունենալով այդ հանգամանքը, որոյե-
ցին այնուհետեւ ապստամբութեան գոր-
ծի համար իրենց բոլոր ոյժը եւ ու-
շադրութիւնը դարձնել զլխաւորապէս
ստորին դասակարգի վերայ թէ՛ գիւ-
ղում եւ թէ՛ քաղաքում : Դաւով քա-
րողի միջոցներին եւ եղանակին, ու-
րոշում էր աշխատել ինչքան կարելի

արհամարհելի կամ արհամարհել ուղե-
ցին նորերն, երբ ասոնք համարձակե-
ցան ձայն ունենալ եկեղեցական, աղ-
գային, կրթական խնդրոց մէջ :

«Լեւոնի»-ն, գուր իրաւունք չունիք,
մերն է եկեղեցին, մեր՝ դպրոցը, մեր
են զաւակները : . . մէկ խօսքով, գուր
հիւր էք, իրաւունք չունիք տանուի-
րով գործերուն միջամտելու :

Առհասարակ այս ձայնը լսուեցաւ
Պուլկարիոյ եւ Ռուսիայի կարգ մը
քաղաքներուն մէջ : այդ տեղեր անհա-
տի մը, շատ շատ թաղականի կամ հո-
գաբարձութեան անդամի մը կողմանէ
անպաշտօն կերպիւ խօսուած է այդ-
պէս ու երեւան հանուած՝ այդ խնդիրը,
հոս, Մարտի 29, ուղղակի քահանայն է
բեմէն ազգաբարձրը :

Անցեալ կիրակի, բնիկներու արժա-
նիքը եւ կարողութիւնը թուելով, վը-
րան-բաց լեզուով մը սկսաւ նախասել
նոր գաղթականութիւնը :

Իսկոյն գուցակցի Տէր Իւթիւհան
հօր միտքը իր գալթող ու գթող ու-
տից հաստատուն կուտան մը ինչո՞ւ
չ'որոնէր. վերջապէս իր սիրտի մազձն
ժայթքեց հետեւեալ բառերով :

«Նորերն ծոյլ են, մուրացկան, խա-
ղամուր, թափառական : Մարտի 29
գաղթականութիւնը կը բաղկանայ լոկ
15—17 պատուաւոր ընտանիքների,
որք հաստատուած են մատուռն եւ կը
վճարեն լիաբուռն : . . Անոնցն է մա-
տուռն, (զօրութեամբ խմանալու է նա-
եւ քահանայն) միւսները իրաւունք
չունին միջամտիլ ըլլալու մատուռի,
եւ կրթութեան խնդիրներու : (զօրու-
թեամբ՝ նաեւ քահանային) : Ժամանա-
կէ մ'ի վեր Իրաւունքի եւ վերջերս ալ
Բիւզանդիոնի մէջ Մարտի 29 գաղթա-
կանութեան եւ երբեմն ալ ինծի դէմ
կարգ մը բաներ կը գրուին, եւ այդ գը-
րոյն ալ, որ համարձակութիւն կուտե-
նայ անուր չը ծածկելու, դիտէք ո՞վ
է : Փրսքիւնի քալիստակաւնը, որուն
անունը զալ չարժեք : Մարտի 29 եր-
բէք պէտք չունի այդ պարոնին խոր-
հուրդներին» եւ դեռ խելով խելապա-
տական անիմաստ խօսքեր :

Իւթիւհան Տէր հայրը, որ ինծի
կ'անարգէ, կ'անուանարկէ, չըսել թէ
զրաժներս սխալ են, հապա կը յայտա-
րարն թէ իբրեւ նոր գաղթական, իբ-
րեւ Փրսքիւնի գործով զբաղող իրա-
ւունք չունիմ ձայն բարձրացնելու :

է, սաստիկ եւ խորին տպաւորութիւն
ներգործել ամբոյն վերայ :

Դործին պէտք էր տալ մինչեւ ան-
գամ մի որոշ չեղեղութիւն եւ խորհրդ-
գաւոր գաղտնութիւն, որոնք հրա-
պուրիչ ազդեցութիւն են ունենում
հասարակ ժողովրդի մտքի եւ զգաց-
մունքի վերայ : . . Այդ նպատակով քա-
րողիչներն համար պատրաստուած էին
անաղիւն, նաչխուն «հրովարտական»,
որոնք տրուած էին իւր թէ «Բուլ-
ղարիայի առժամանակեայ կառավարու-
թեան» կողմից եւ կամ «բուլղարական
ազգային կեդրոնական յանձնաժողո-
վից» եւ ստորագրուած էին գոյութիւն
չունեցող նախապահների ստորագրու-
թեամբ : Այդ հրովարտականի ճակատը
եւ կողքերը զարդարուած էին սուրե-
րի, հրացանների, դաշույնների, կա-
ռավարների եւ ուրիշ նոյն օրինակի նը-
կարներով, իսկ ներքեւում փայլում էր
մի անաղիւն կարմիր կնիք, որի վերայ
քանդակուած էր մի կատաղի առիւծ
եւ առիւծի ճիւղաններում պատառուած
տաճկական կիսալուսինը : Այդ տեսակ
պատկանիւնի ձեւերով էին պատրաս-
տուած նաեւ ա'յն բոլոր թղթերը, ու-
րոնք այս կամ այն նպատակի համար
(փող հաւաքելու եւայլն) կարող էին
պէտք գալ քարոզիչներին : Այդ բոլոր
թղթերը եւ հրովարտականները կաղմու-
մ եւ ապաղրում էր իւր սեփական տպա-
րանում Լիւբեկն կարաւիւղով :

Նպատակիդ հասա՞ր ուրեմն, տէրհայր,
բեմէն չէ, երկինքէն ալ պատգամն
այդօրինակ ոճով, ես չեմ դադրիր գը-
րել : Ի՞նչիւր, վար ի՞նչիւր սեղանէն, տէր-
հայր, որ վէճի տեղ չէ, եկու լրագրա-
կան ասպարէզը, այնտեղ տեսնուինք :

Հոգաբարձութեան ազգաբարձրութեան
առջեւ կը տատամար, ու ձեռներդ չը-
փելով «ինչ պէտք է ընել ուրեմն»,
կը մրմնջէք : Այո՛, բեռ մ'էք, Տէր հայր
Մարտի 29 գաղթականութեան, որ խե-
լացի է, մատուռը կը մատակարարէ եւ
անօգուտ տէրութիւն մը կը սնուցանէ : . .
գուցէ պէտք չունիք իմ խորհուրդնե-
րուն : Եկու ան'ս որ լրագրութիւնը այդ
չը ճանչնար, ձայնիս արձագանքը կու-
տայ եւ հաշիւ կը պահանջէ անդործ ու
անտարբեր հովիւէք :

Ես իմ գրածներու անմիջական աղ-
ղեցութիւնը փորձով տեսած եմ ու պի-
տի շարունակեմ լոկ խղճիս թելադրու-
թեանց հետեւելով գրել, համեստ ոյ-
ժիս չափով օգտակար ըլլալու համար :
Եթէ ըսելիք մ'ունիք, կը տեսնուինք,
բայց ոչ մատուռին, այլ մամուլին մէջ :

Հ. Ա.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Իրաւունքի ՅՏՐԳ ԹԻՒԼԻՆ մէջ
տեսնուած Տօյրիկ վերնագրով հա-
տուածէ մը կիմանամ որ եօթը
աղգայինք ձեզ գրած են թէ շահա-
դէտ մեքենայութիւններ կը լա-
րեմ աղգային գործերու մէջ, Ջա-
րոյթով կը բողոքեն՝ այդ ան-
պատկառ յերիւրանքին դէմ որոնց
հեղինակները, կեղտոտ կերքերէ
թելագրուած՝ նպատակ ունենալ կը
թուին համեստ անունս արտա-
ւորել : Կարծեցիկ մեքենայութեան
թելաներէս մէկը միայն յառաջ թող
բերեն, ու ես գատապարտութիւն
կատարեալ պիտի համարիմ : Հա-
կառակ պարագային՝ ուսերս մի-
այն թօթուել պիտի գիտնամ այն-
պիսի գրութիւններու հանդէպ,
զորս գրողները ոչ թէ իրօրու ըս-
տուգութիւնը ունին իրեց հետ,
այլ զանազան նկատումներով տու-
գործումներ և որոնք հետեւապէս
բնաւ արժէք մը չունին : Ճշմար-
տութեան և իրողութեանց բոլորու-
վին տարբեր ըլլալը դժուար չէ
հաստատել տալ ուրիշ աղգային-
ներու և նոյն իսկ թալ խորհրդին :

Շ.

ՊԱՇՏՏՈՆԱԳԻՐ ՄԸ

Իրաւունքի եւ Շարժումի մէկ երկու
գրութեանց դէմ որոնք քննադատած են
Պուլկարի քահանաները, աղգ. վար-
ժարանին դասատուն եւ Հոգաբարձու-
թիւնը, հերքման համար մը ստա-
ցանք անստորագիր եւ հոգաբարձու-
թեան կնիքը միայն կրող :

Նամակին նախատական մէկ քանի
ծանր բացատրութիւնները, պաշտօ-
նական գրութեանց համար կարի ան-
պատշաճ եւ անսովոր, այնքան անըս-
տասելի էին Արեւելքի ամէնէն քաղա-
քակիրթ երկրին մայրաքաղաքին հայ
հոգաբարձութիւնէն, որ վարկեան մը
կասկածներ իսկ ունեցանք նամակին
վաւերականութեան մասին :

Սակայն յետոյ, ուրիշ ենթադրութիւն
մը աւելի բանաւոր երեւցաւ մեզի :
Հաւանական է որ Հոգաբարձութեան
անդամները հմուտ չըլլալով հայերէնի

հերքման գործի մը խմբագրութիւնը յանձնաձգելու օրինակ մը որ չարաչար պործածած է իրենց վստահութիւնը:

Առջին պարագայի մէջ չենք կարող հաւատալ թէ Պուրթուրի Պատ. Հոգաբարձութիւնը զիջած ըլլայ նախապէս քիչ շատ բարեկիրթ մասնաւոր անհատի մը իսկ անվայել ստորին բացարձակութիւններով, երբ պարտ էր հերքել միայն լուրջ, օրինաւոր կերպով, ինչ որ միակ վայելուչ եղանակն է ամբողջ հասարակութեան մը գործերը վարող պաշտօնական մարմնի մը համար:

Այս պատճառներով ահա առ այժմ չենք հրատարակել Հոգաբարձութեան նամակը եւ կը սպասենք բացարձակութեան մը, որ կրէ ոչ միայն կնիք, այլ եւ գիւտի անդամներուն ստորագրութիւնները եւ լիովին հաստատել կամ հերքել վաւերականութիւնն այն նամակին, որուն բառական պարունակութեան բարոյական պատասխանատուութիւնն կը փոխադրենք որ աղատ ըլլայ ազգային պաշտօնական մարմին մը, զոր կը յարգենք իբր ներկայացուցիչ ազգին մէկ մասին:

ՍՈՒԽԱՆԸ ԵՒ ՀԱՅ ԶԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐԸ

Կ. Պօլսէն կը գրեն Արմէնի:

«Կըսուի թէ Սուլթանը իմացած ըլլալով որ Դրոշակեանները մտադիր են ընդհանուր ժողով մը գումարել թիֆլիսի մէջ, կը վախնայ սր որոշեն դարձեալ բռնի միջոցներու դիմել: Ասոր համար հըրամայեց Արթին բաշային փութով զրկել իր որդին Տիրան պէյը, կամ, ուրիշ անձ մը, վերստին բանակցելու համար Դրոշակեաններուն հետ: Պատուիրակը պիտի ջանայ ժէնեւի քով թէնի դորձունելութեան վերջ մը տալ, կամ անոր անդամները ծախու առնելով մեծ գումարով մը, կամ, անոր խոստանալով քանի մը զիջողութիւններ երկրին հայ հպատակներուն, զիջողութիւններ որոնք, հարկ չէ ըսել, բարենորոգումներու գործադրութեան խոյս տալու իբր նոր միջոց պիտի ծառայեն: Փառիշտ համոզուած է որ Դրոշակեան կուսակցութիւնը միայն կայ, կարող նոր հարուած մը սարքելու: Դրան թէ Դրոշակեանները իրենք այս համոզումը ներշնչած են այն պատգամաւորներուն, որոնք ասկէ առաջ Արթին բաշայի կողմէ զըրկուեցան: Թուրք դահլիճին մէկ մասը Սուլթանին խորհուրդ տըւաւ բանակցութեան մասնէ չափաւոր հայրենասէրներու հետ որոնք կը պահանջեն Պէռլինի դաշնագրին 61. յօդուածին գործադրութիւնը: Բայց Սուլթանը աւելի ընդունակ ըլլալով երկիւղի քան խորհրդածութեան, նախընտրեց հրամայել որ զիմուի ժէնեւի քով թէնի Պէյաք չիկայ ըսելու թէ այս մանրամասնութիւնները կուտամ ամէն վերապահութեամբ:»

Դարմէնի իր կողմէն կաւելցնէ. «Առանց Դրոշակեան կուսակցութեան կարծիքներուն համամիտ ըլլալու, չենք կարծեր որ ան ընդունակ ըլլայ կոշտութեամբ եւ իր սկզբունքներուն դէմ գործելու:

Սուլթանը կրնայ ուրեմն այս հաւանականութիւնը զենքիկէ ընել՝ ապահովելով միայն իր հայ եւ ուրիշ հպատակներուն կեանքը, պատիւը եւ ստացուածքը: Էսկան խնդիրը այս արդիւնքը ձեռք բերելն է: Բանագնացներու հանգամանքը փայտ չէ մեղի, ինչպէս եւ բոլոր հայ հայրենասէրներուն:»

ԼՐԱՔԱՂ

Լ.Առնէնի կը գրեն Կ. Պօլսէն.

Հայ ազատական մարմինն հրապարակելով իր մասին Յարապաշայի նկարագիրն աւելցող մէկը նուրբան եւ ընկ. նման մարդերու հետ չըփոխելու սխալը կը գործեն: Այս հրապարակագիրներէն մէկը վերջերս զրեց թէ Յարութիւն բաշա, հանգուցեալ Յակոբ բաշա եւ Հայր Մկրտիչ խորհուրդ տուած էին Ս. Աշքեանի չի հրաժարիլ եւ թէ այս խորհուրդները պատճառ եղաւ այն բոլոր չարիքներուն, որոնք թափեցան հայ հասարակութեան վրայ:

Կրնամ ձեզ վստահեցնել թէ պարզապէս զրպարտութիւն մ'է այդ Յարութիւն բաշայի մասին: Այս նշանաւոր պետական մարդը երբեք խառնուած չէ Հայկական գործերուն Աշքեանի Պատրիարքին ժամանակ, որ արդէն չէր կրցած բնաւ իրեն համակրութիւն ներշնչել: Յարութիւն բաշա հայ հասարակութեան գործերուն միջամտած է միայն Բարթողիմէոսի պաշտօնավարութեան օրով: Նոյնպէս հետեւ կեցած է Սրբազան Իզմիրլեանի օրով եւ Սուլթանի որոշ մէկ հրամանովն է որ տեսակցութիւններ ունեցաւ այս հոգեւոր պետին հետ՝ անոր չափաւորութիւն յանձնարարելու համար:

— Պաթուկի ոստիկանութիւնը հայ զաւթականներու վերադարձին վերաբերեալ բարձրագոյն հրամանին կցած է հետեւեալը. «Կատարելով Թուրքիային կողմէ գաղթած եւ Պաթուկի մէջ ապրող հայերուն որ փութան իրենց վերադառնալու զխառնութիւնը ինձ յայտնել առ առաւելն մինչեւ Յուլի 15: Հակառակ պարագային՝ զիրենք Պաթուկի կը զրկեմ Թուրքիա, բարձրագոյն հրամանին համաձայն:»

Գաղթականներուն վերադարձը ըսկսած է արդէն:

— Մշակ կը գրէ թէ հանգուցեալ Գէորգ Բանանեանի թողած հարստութիւնը, 47000 ռուպլի, պիտի գործածուի բարեգործական նպատակներու: Հանգուցեալին այրին, տիկին Վառլառէ Բանանեան: որ կտակակատար կարգուած է, դեռ որոշած չէ թէ ինչ գործի պիտի յատկացուի այդ գումարը:

— Մէյտիսթէն (Անգլիա) կը գրեն Լ.Առնէնի թէ Տ. Յ. Կ. Թէոփոլոս անգլիացի հայասէրը որ նոյն քաղաքին մէջ ապաստանարան մը հիմնած է կաթոլիկ հայ ուսանողներու համար, Վառլառէ Եւ Դ. հայ տղաներ բերել ապուհարկաւոր գումարը զրկած է Տ. Արտոնցի: Այս նորատի ուսանողները պիտի բաժնին, ուսանին ու կրթուին անգլիական տուն մը մէջ:

Տ. Արտոնց, բնիկ Սեբաստացի համակրիչի երկտեսարգ մը, կեղծանակաւ իր աշակերտ. որուն հակողութեան ներքեւ ուրիշ պատանիներ ալ կրթութիւն կառնեն մարդասէրներու օժանդակութեամբ վերջերս Վառնա գալով, երեք մանչ եւ մէկ աղջիկ ընտրեց, զորս իր հետ տարաւ Անգլիա:

— Վիկտորիա Միլիթարեան միաբանութիւնը իր ծախքով ցարդ հրատա-

րակած է 1023 մեծ ու փոքր գիրքեր հետեւեալ լեզուներով:

Հայերէն	323	հատ
Պահլաւերէն	9	
Գերմաներէն	539	
Ֆրանսերէն	9	
Իտալերէն	14	
Լատիներէն	69	
Լեհերէն	4	
Յունարէն	6	
Ռուսներէն	2	
Տաճկերէն	47	
Հունգարերէն	1	

1023

Այս գրքերէն գրեթէ 80 0/0ը այլ եւ այլ տպագրութիւններ ունեցած են, ոմանք մինչեւ 10, 20 եւ 30 անգամ, եւ շատերը ունին հատորներ, մինչեւ 17 հատոր: Միլիթարեան Հայերէն տըպած են նաեւ ուրիշներու յանձնարարութեամբ քանի մը հազար զանազան գրքեր, ամէն լեզուներով:

— Միլիթարեան իր վերջին թիւին մէջ Թափառիկ ստորագրութեամբ յօդուած մը հրատարակած է, ուր պատմուած է հետեւեալ դէպքը:

Պապը Ալեի ցոյցէն 10-15 օր առաջ, երբ մայիս 11-ի բարենորոգմանց ծրագիրը Սուլթանին ներկայացուած էր եւ անոր ընդունելութիւնը կը ձգձգուէր, Թափառիկ պատիւ կուենայ տեսակցելու Սըր Ֆելիք Գըրրիի հետ, որ կըսէ իրեն իմէջ այլոց. «Հայերը Անգլիոյ վրայ բնաւ յոյս դնելու չեն. քանի որ Ռուսիոյ ընդգրկումիւնը կայ, Անգլիա բան մը չէ կարող ընել: Հայերը պէտք է հանգարտ կենան եւ առ այժմ դո՛ւ չեն ինչին տըրուած ծրագրին պարունակութեան: Եւ ապագային մէջ այդ ծրագիրը ընդարձակելու շատ յոյսեր կան եւն:»

Տ. Թափառիկ անգլիական դեսպանին այս խօսքերը կը փութայ հաղորդել Պապը Ալի ցոյցը կալմակերպող եւ վարող անձնաւորութեան, որ կը պատասխանէ. «Ցոյցը անհրաժեշտ է, Հայկական խնդիրը ստուած է, պէտք է տաքցընել, եւն:»

Տ. Թափառիկ կը ջանայ տարահամուել իր խօսակցը. բայց սա անգրգուելի կը մնայ եւ կը հեռանայ ըսելով. «Տեսէք, ինչպէ՞ս նմանը չտեսնուած ցոյց մը պիտի ըլլայ. Հնչակեանները մնած չեն:»

Յօդուածագիրը չի տար իր խօսակցին անունը, եւ միայն կըսէ անոր համար թէ Հնչակեան գօմի թէին այն անգամն է, զոր ամէն ոք կը ճանչնայ իր դաւաճան գործերովը:

Ով որ ալ է, պէտք է ընդունիլ թէ ահագին պատասխանատուութեան մը ներքեւ մնացած է իբր վարիչ եւ առաջնորդ, որմէ պահանջելի էին զգացումէ աւելի խելք եւ եռանդէ աւելի արթնուն շրջահայեցութիւն:

«ԻՐԱՆԻՆՔ»-ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Ա. Սիլիւստրէ. Ոչ պէտք կայ եւ ոչ յարմար է որ տարիներ առաջ վերջացած խնդիրներ երեւան

րերէք եւ ուրիշ բազմաքի մը վէճերուն մէջ նետուիք այդ եղանակով: Օրական վէճերը արդէն բաւական են աւելի եւ թողէք որ Տիպարիշյանները խօսին ծանօթ գործին մէջ, որուն աւելի տեղեկ են առնեք քան դուք:

Շար... վառնա: Կը խնդրենք հանգիստ անգամ մը մեր գրասենեակը:

ՄԻԻԹԵՆԵՎ ՎԻԵ

Մայիս 25-է թուրք օրտուարը սընըն սօն իբր խապուրարը վճարուած չըգմըլ օրուպ, եռնան ասքերի թօնօլօսա վէ վճարա կերտի վէ թօնսալիա թէքմիլէն եէնի. տէն Եունանիսթան հիւքմիւ ու զապթը ալթընա կէշմիլ օլտը:

— Թուրք օրտուարը գօմանտանը Էտհէմ բաշա վճարուած Սթանպուլ կիթմիլ տիր:

— Թանըն Սթանպուլտան ալտըլը պիր խուսուսի թէշէկրաֆա նազարէն: Պապը Ալի պու կիւնէր վերոա տէվէթէրինէ պիր նօթա իրալ խուսպ, կիրիտ մէսէլէսինին պիր ան էվիլէ հալ օլունմասընը թալէպ իտէճէք տիր:

— Մայիս 24-է Պուկարիա մասլահաթ կիւկարը Մ. Մարքօվ Ստորագրում պիր նօթա իրալ իտուպէքսէրիս իսկիւպ վիլայէթի ասքերի թարաֆընտան իրիսթիյան էհալիսինէ դարչը իհրա օլունմըլ 13 ճինայէթ վուգուաթընը թաւտա իթմիլ տիր: Մ. Մարքօֆ պու վուգուաթլարըն Պուկարիա էհալիսի իւլէրինէ իտէճէկի ֆէնա թէշէսիլէրին միւհիթմէլ նէթիճէլէրին տէրիսթըր վէ իսկիւպ վալիսի Հոֆըլ բաշանըն աղլինի թալէպ իթմիլ տիր:

— Վէսէլ (Մարքտոնիա) սերպ մէտրապօլիտի իմէթանօվիլ եպիս. Հոգեգալուստ կիւնիւ քիլիսէյէ կիտէր իքէն, Բօրօվիլ նամընտա պիրիսի պիր թօրուլ էլինտէ մու մաիլէյհ եպիսկոպոս իւլէրինէ հիւսուս իթմիլ տիր: Մէտրապօլիտին բեաթիպի վէ խըզմէթընարը Բօրօվիլէ դարչը գօյմուշար վէ նիհայէթ զաթիլէլէր եէթիլիպ մէրգոււմ թէվիլի իթմիլէլէր, Պուկուուաթըն միլլի խուսուսէթտէն նէշէթ իթմիլի ումուլէն դանն օլունտըլընտան, էհալի պէյնինտէ պէյիլէք հէյէճանա ու հիտտէթէ սէպէպիլիլ վէրմիլ տիր:

— Մալիւմ օլտըլը իւլըրէ Սուլթան պիր վաղըթտան պէրու վաւիկանտա պիր էլիլ թային իթմէք արդուսընտա պուլոււնըյօր: Ռօմաւտան պիլտիլիլիլէնէ կէօրէ՛ Սուլթան 10 կիւն էվիլէ պու մէմուրիլէթ սապըդ Աթինա էլիլիսի Ասիմ պէյէ նասպ իթմիլ տիր: Յրանսա հիւքմիլէթի Սուլթանըն պու էմէլինէ դարչը օլտըլընտան, պու մէսէլէ հոգընտա Մ. Հաւնօթ վէ կարտինալ Ռամբօլտ

